ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023Թ. ՄԱՐՏԻ 13-15-Ը ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ /ԲՐՅՈՒՍԵԼ/ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. **<u>Անունը, ազգանունը՝</u>**

Հակոբ Վարդանյան

2. **<u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>**

ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալ

3. **<u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>**

Բելգիայի Թագավորություն (Բրյուսել), 2023 թվականի մարտի 13--ից 15-ը

4. **<u>Հրավիրող կողմը.</u>**

EU4Energy ծրագրի իրականացնող Եվրոպական էներգետիկ կարգավորողների խորհուրդ (CEER)

5. **<u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>**

Մասնակցություն էներգետիկ ոլորտի բարձրաստիճան պաշտոնյաների համար անցկացվող Եվրոպական էներգետիկ կարգավորողների խորհրդի (CEER) երկօրյա տարածաշրջանային դասընթացին

6. **<u>Քննարկված թեմաները.</u>**

- ✓ Եվրոպական էներգետիկ կարգավորողների խորհրդի (CEER) դերն ու գործառույթները՝ ռազմավարությունը և աշխատանքային ծրագիրը,
- ✓ եվրոպական էներգետիկ քաղաքականության մշակման մեջ ներգրավված հիմնական դերակատարների դերերը, ԵՄ մակարդակով որոշումների կայացման գործընթացները,
- ✓ ԵՄ տեսլականը և գործողությունները Արևելյան գործընկերության երկրներում,
- ✓ Հարևանության և ընդլայնման բանակցությունների ռազմավարական ծրագիրը,
- ✓ ԵՄ ֆինանսական և տեխնիկական աջակցության հնարավորությունները էներգետիկայի ոլորտում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Առանձին հանդիպումներ տեղի չեն ունեցել:
Էներգետիկ ոլորտի բարձրաստիճան պաշտոնյաների համար անցկացվող Եվրոպական էներգետիկ կարգավորողների խորհրդի (CEER) երկօրյա տարածաշրջանային դասընթացի ընթացքում քննարկվել են Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (CEPA) ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը և մասնակից երկրերի օրենսդրական մոտարկումները ԵՄ չափանիշներին:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպման արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Ակնկալվում է շարունակական աշխատանքներ տանել EU4Energy ծրագրի շրջանակներում համագործակցության խորացման և ազգային օրենսդրությունները եվրոպական կարգավորումներին մոտարկելու ուղղությամբ:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**

17.03.2023